



Կարգապահական գործ թիվ ԿԳ-14156

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի ապրիլի 15-ի թիվ 77-րդ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/54-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՐՏԻՆ ԶԻԼՖՈՒՂԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ), կազմով՝ նիստը նախագահող Ալեքսանդր Սիրունյանի, մասնակցությամբ խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Լուսինե Սահակյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Երվանդ Վարոսյանի, Մարտուն Փանոսյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով պատասխանող՝ փաստաբան **Մարտին Զիլֆուղարյանին** (արտոնագիր թիվ 444) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 2014 թվականի նոյեմբերի 18-ին տրամադրված տեղեկանքի համաձայն անդամավճարի գծով Պատասխանողի պարտքը կազմել է 40.000 Հայաստանի Հանրապետության դրամ 2014թ. մարտից 2014 հոկտեմբեր (ներառյալ) ամիսների համար:

:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը

Պատասխանողի կողմից սահմանված անդամավճարը չմուծելու համար ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 2014 թվականի նոյեմբերի 18-ին թիվ 396-Ա/ԿԳ-14156 որոշմամբ վերջինիս նկատմամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19 հոդվածի առաջին մասի 5-րդ կետի «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ և կարգապահական գործը հանձնվել է խորհուրդ:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի ապրիլի 15-ին, ժամը 18:28ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. Պատասխանողի բացատրությունները

Պատասխանողը թեև պատշաճ ծանուցվել էր խորհրդի նիստի վայրի և ժամանակի մասին, սակայն նիստին չի ներկայացել եւ բացատրություն չի տվել:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում այն, որ 2014 թվականի նոյեմբերի 18-ի դրությամբ անդամավճարի գծով Պատասխանողի պարտքը կազմել է 40.000 Հայաստանի Հանրապետության դրամ, որը, սակայն, սույն կարգապահական գործի քննության պահի դրությամբ ամբողջությամբ վճարվել է (հիմք՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի 15.04.2015թ. տեղեկանքը):

5. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները

Կարգապահական գործի քննությամբ պարզվել է, որ փաստաբան Մ.Զիլֆուղարյանի նկատմամբ նախկինում ևս հարուցվել են կարգապահական վարույթներ, ընդ որում միշտ՝ անդամավճար չվճարելու կապակցությամբ, Մ.Զիլֆուղարյանը ենթարկվել է կարգապահական տույժերի, որոնք այժմ մարված են:

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Վերոգրյալի հաշվառմամբ, Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման, քանի որ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված՝ Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգի 17-րդ կետի համաձայն առաջին անգամ առնվազն երեք ամսվա համար անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման:

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի հինգերորդ մասի 14-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետով, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի հինգերորդ մասի 2-րդ կետով, Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց '

1. Փաստաբան Մարտին Զիլֆուղարյանի (արտոնագիր թիվ 444) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:
2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Մարտին Զիլֆուղարյանին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

**Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող**

Ալեքսանդր Սիրունյան